



Կ Ր Ո Ն Ա Կ Ա Ն

ՄԵԿ Է ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԹԵՇ ԴԱՎԱՆԱՆՔՈՎ,
ԹԵՇ ՆՎԻՐԱՊԵՏՈՒԹՅԱԾՄԲ*

Կեղեցին մյուս կարևոր հատկանիշն է Սիուբյունը։ Հայաստանյայց Եկեղեցին մեկ է ոչ միայն հավատքով, ծխով, և Խորուրդներով, այլ նաև մեկ է իր կանոնական օրենքներով և իր նվիրապետական գրությամբ։ Իր կանոնական օրենքները դրված են Հայաստանյայց Եկեղեցի բարձրագույն հեղինակությունը ներկայացնող Եկեղեցական ժողովներու կողմեն։ Եթե պետք ըլլա անոնց մեջ փոփոխթյուններ մտցնել կամ նոր կանոններ սահմանել, այդ պետք է ըլլա Եկեղեցի միևնույն բարձրագույն օրդաններով։ Եկեղեցի լրութենեն ընդունված և դարերու գործածությամբ նվիրագործված հիմնական կանոններու հակառակ մասնակի օրենքներ սահմանել, կնշանակե խախտել Եկեղեցին միությունը։

Հայաստանյայց Եկեղեցին մեկ է նաև իր վարչական և նվիրապետական գործյամբ։ Իր ընդունած վարչաձևին համաձայն, Հայաստանյայց Եկեղեցիին մեջ գոյություն ու-

* Ուրախությամբ ենք հրատարակում Երուաղեմի Հայոց Պատրիարքության պաշտոնաթերթ «Սիոն» ամագրի 1957 թվականի Հոկտեմբեր—Նոյեմբեր միացյալ համարի ՀՀաւատամբ և ի մի միայն... Սույր Եկեղեցի Խմբագրականից բազմաթարար «Մեկ է Հայաստանյայց Եկեղեցին քե՛ դավանակով, քե՛ նվիրապետարյամբ» ենթախորագրով հատվածը—ԽՄԲ. «ՀՅՄԻԱԾԻՆԾ» ԱՄՍԱԿԴԻ,

նին ինքնավար քանի մը շրջանակներ։ Այս ինքնավար Աթոռներու գործվյունը երրեք չեղծեր Հայաստանյայց Եկեղեցին միությունը, որովհետև նախ անոնք իրարմբ բոլորովին անջատ միավորներ չեն, այլ մեծ ամրուցի մը անրաժանելի մասերն են։ Երկրորդ՝ կանոնական որոշ օրենքներով կապված են անոնք Հայաստանյայց Եկեղեցին կեդրոնական Աթոռին։ Յուրաքանչյուր ինքնավար Աթոռին հեղինակությունը կտարածվի իրեն համար սահմանված շրջանակին վրա միայն։ Իր շըրջանակն դուստ գալ և իր հեղինակությունը տարածել ուղիղ Աթոռներու իրավասության ենթակա շրջաններուն վրա՝ նախ բացահայտական արարք մըն է. Երկրորդ հիմքն կիսախտի Հայաստանյայց Եկեղեցի։ Մեկությունը։ «Ինչ որ չեք ուզեր, որ ուրիշներ ձեզի ընեն, զուք այ անոնց այնպիս մի ընեք։ Ավետարանական ծանոթ ոսկեղեն խոսքին այս ժմատական ձեկին նկատառությունը գեթ կսպասվեր անոնցմեն, որոնց մեջ տակալին չէ մեռած մարդկային ամեննեն տարրական ողջմտության գիտակցությունը, եթե մեռած մինչև իսկ քրիստոնեական ոսկին ու կրոնական և կարգապահական գիտակցությունը։ Ինքնավար Աթոռներեն ոչ մեկը պիտի ուզեր, որ քույր նվիրապետական Աթոռներեն մին կամ մյուսը ուսնագություններ ըներ իր իրավասության ներքեւ դրված շրջանին մեջ։ Նման փոփոխություններ, եթե հարկ է

ընել, պետք է կատարվին փոխադարձ հաւաքացողությամբ, և Եկեղեցիի Գիրագույն Իշխանությունը ներկայացնող ժողովական մարմիններուն կողմեն, և ոչ թե ինքնագույն:

Տրված ըլլալով հանգերծ շրջանային ինքնավարության այս սկզբունքը, և ընդունելով ինքնավար Աթոռներու կանոնական դիրք Հայաստանյաց Եկեղեցիի նվիրապետության մեջ, դեռ անխախտ կմնա այն մյուս սկզբունքը, որ պայման է Եկեղեցիի մը ՄԵԿության. այն է՝ ՄԵԿ Եկեղեցին մեկ գլուխ միայն կունենա:

Երկգլխանի գործարանավոր միություն մը անձանոթ է որքան իրաց բնական մարդին մեջ, նույնքան և ավելի Մի Եկեղեցիին մեջ, եթե այսօր քրիստոնեական աշխարհի մեջ «բազում Եկեղեցիներ» կան, պատճառն այն է, որ «բազում գլուխներ» կան: Գլուխին մեջ կամ բազում ըլլալն է, որ կծառե մարմիններուն և կազմակերպությանց մեկ կամ բազում ըլլալը: Հայաստանյաց Եկեղեցին եթե կընդունի որ ՄԵԿ է, պետք է ունենա ՄԵԿ և ընդհանրական գլուխ մը, այլապես կխախտի Հայաստանյաց Եկեղեցիի Մի-ուրանը:

Եկեղեցիի վարդապետական կամ դավանաբանական Միության դեմ գործելը կուշենք Բնեթափիկոսություն: Խսկ Եկեղեցիի վարչական միության դեմ գործելը, այսինքն Եկեղեցիին միջ երկուություն հառաջացնելը, կուշենք Բնեթափած: Եկեղեցիին համար երկուքն ալ հավուսապես վտանգավոր են և հնտարար՝ դատապարտելի: Վասնդի և ուկուքն ալ կիսախոտեն Եկեղեցիի Միության հատկանիշը և կեղծանեն անոր դիմադիմը:

Հայաստանյաց Եկեղեցին մեկ է և մեկ միայն կրնա ըլլալ, Այս միության մեջ մնա-

լու համար անհրաժեշտ է ոչ միայն նույն ավատքն ու պաշտամունքն ունենալ, այս նաև աներածեշտ է ընթանալ մեկ և նոյն կանոնական օրենքներով: Աներածեշտ է մեջն ըլլալ մինենույն նվիրապետական և միենալու եկեղեցական-վարչական դրույթան, զար ունի Հայաստանյաց Եկեղեցին: Հայաստանյաց Եկեղեցիի նվիրապետության, հոգևոր իշխանության բարձրագույն գլուխը Ամենայն Հայոց Կաթողիկոսն է:

«Ամենայն Հայոց Կաթողիկոս» տիտղոսը կարենու և հիմնական սկզբունքի մը արտահայտությունն է: Եկեղեցիի Միության հատկանիշն են կրիխ այդ տիտղոսը: Հայաստանյաց Եկեղեցիի Միությունը «Ամենայն Հարց Կաթողիկոս»-ի անձին մեջ կմարմնանա: Զայն նշկանելը կնշանակե իւղիլ, գուփս գաւ, Հայաստանյանց Եկեղեցիի Միության սահմաննեն: Շրբունքի սպասարկություն միայն կըլլա «Ճանշնալ Ս. Էջմիածնի հոգևոր հեղինակությունը», առանց ճանշնալու անոր հաստատյալ իրավասության բովանդակությունը և սահմանը:

«Ամենայն թագատրութիւն բաժանեալ յանձն իւր աւերի, և ամենայն քաղաք կամ տուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ կացցէ»: Ավետարանական և պատճական այս ճշմարտության տիտուր վկան մեր աղջային-քաղաքական պատմությունն է: Հայաստանյաց Եկեղեցիի բարձրագույն իշխանությունը և Հայ Եկեղեցիի հարազատ զավակները, արթընալով ահավորութենեն վտանգին, որ կըացվի Մայրենի Եկեղեցիի ոտքերուն ներքե, թույլ պետք չէ տան, որ վերտէիշլալ մժիռը իրականանա նաև մեր Եկեղեցական պատմության մեջ:

